ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<22>> ----------07----------2025թ. N ՄՈ/718 -Ա

ք. Արմավիր

«ԽՈՐՈՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Վարդուհի Ասատրյանի 2025 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդուհի Ասատրյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի օգոստոսի 11-ից 22-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վարդուհի Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Քրիստինե Խաչատրյանին:
3. «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Քրիստինե Խաչատրյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի օգոստոսի 11-ից 22-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Վարդուհի Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

2025-07-22 17:57:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆՊ-ի կողմից

Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ